

Մ.Ռ. ԲԱԴԱԴՅԱՆ

**ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ**

Զուգադրվում և վերլուծվում են կենդանիների անվանումներով անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների կառուցվածքային տիպերը հայերենում, ռուսերենում և անգլերենում: Դարձվածքների ուսումնասիրությունը բացահայտում է լեզվամտածողության ընդհանրություններ և տարբերություններ ուսումնասիրվող լեզուներում:

Առանցքային բառեր. դարձվածք, առանձնահատկություն, համեմատություն, ուսումնասիրություն, լեզվամտածողություն, ընդհանրություններ, տարբերություններ:

Դարձվածքները կամ դարձվածային միավորները (ԴՄ) ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են և արտահայտում են նրա լեզվամտածողության ինքնատիպությունն ու յուրահատկությունը: Դարձվածքներում իրենց արտահայտությունն են գտել ժողովրդի հարուստ կենսափորձը, նրա պատկերացումները օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների մասին, վերաբերմունքը մարդկային հարաբերությունների նկատմամբ: Դարձվածաբանական միավորները խոսքին տալիս են պատկերավորություն, արտահայտչականություն, դիպուկություն և ձերբազատում խոսքը միօրինակությունից, տաղտկալիությունից ու չորությունից:

Դարձվածաբանությունը լեզվաբանության համեմատաբար երիտասարդ գիտաճյուղերից է. հայագիտության մեջ (հատկապես խորհրդային շրջանի լեզվաբանական աշխատություններում) ԴՄ-ներին առնչվող խնդիրներին անդրադարձներ եղան 20-րդ դարի 50-60-ա-կան թթ. սկսած:

Մ. Աբեղյանը բառերի կապակցությունների նորիմաստավորումը համարում է դարձվածքների առաջացման հիմք [1, 398]: Ա. Մուրվալյանը դարձվածաբանությանն ու բայակազմությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ քննում է հայոց լեզվի դարձվածքների հին և նոր շերտերը: Նա դարձվածքը լայն իմաստով ըմբռնող լեզվաբաններից է: Ըստ նրա՝ «դարձվածքային առանձնահատուկ արտահայտությունների և սովորական արտահայտությունների միջև հաճախ դժվար է լինում որոշակի սահման դնել, ուստի դրանք ընդհանրապես կոչվում են դարձվածքներ» [2,16]:

Պ. Բեդիրյանը «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» աշխատության մեջ գրում է. «Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի,

վերաիմաստավորված կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած» [3,103-104]: Նա քննում է լեզվաբանության այդ ճյուղին առնչվող հարցեր, ուսումնասիրում դարձվածքների բառագիտական և շարահյուսական հիմունքների, դարձվածքների բաղադրիչների իմաստային, կառուցվածքային և քերականական առանձնահատկությունները: Տալով հայերենի դարձվածքների կառուցվածքային տիպերը՝ ուշադրություն է դարձնում նաև դրանց արտահայտման ձևերին գրաբարում, միջին հայերենում և արևմտահայերենում: Համեմատելով տարբեր լեզուների դարձվածքների առանձնահատկությունները՝ նշում է դրանց նմանություններն ու տարբերությունները:

Ռուս և արտասահմանյան լեզվաբանները ԴՄ-ներն ուսումնասիրել են տարբեր տեսանկյուններից:

Վ.Պ. Ժուկովը ռուսերենի ԴՄ-ների իմաստաբանությունը քննելիս այդ լեզվի բոլոր դարձվածքները, ըստ իրենց համընդհանուր իմաստի դրսևորման, բաժանում է տարբեր տիպերի: Առաջին տիպին, ըստ նրա, պատկանում են այն դարձվածքները, որոնց ընդհանուր իմաստը կոահվում է քերականորեն գերադաս անդամից: Երկրորդ տիպին դասվում են այն դարձվածքները, որոնց իմաստը չի նախանշվում գլխավոր անդամով: Վ. Ժուկովը նկատում է, որ առանձնահատուկ միջակա տիպ են կազմում երկու նշված տեսակների հատկանիշները զուգակցող համեմատություն - դարձվածքները [4,34]:

Ն.Մ. Շանսկին բոլոր դարձվածքներն ըստ կառուցվածքի բաժանում է երկու հիմնական տիպերի՝ նախադասության կառուցվածքով (*дела-как сажа бела*) և բառակապակցության կառուցվածքով (*как выжатый лимон*) դարձվածքների [5,72-73]:

Ու. Մաք Մորդին և Ջ. Սեյդլը, անգլերենի օրինակով քննելով իդիոմը՝ որպես լեզվական երևույթ, այն բնութագրում են իբրև բառերի մի ամբողջություն, որի նշանակությունը կախված չէ այդ բառերի առանձին իմաստներից:

Նրանք առանձնակի ուշադրություն են դարձնում համեմատություն-իդիոմներին: Ըստ նրանց՝ այդ համեմատությունները (*as black as ink, as bright as day, as cold as a stone* և այլն) լեզուն դարձնում են արտահայտիչ և մատչելի [6, 233]:

Գ. Քլեյսերն առանձին ուսումնասիրություն է նվիրել անգլերենի համեմատություններին: Նա դրանք բնութագրում է իբրև «պատկերավոր, հետևաբար և պոետիկ արտահայտություններ, որոնք ճշտությամբ դրսևորում և ցայտունորեն նկարագրում են որևէ իրողություն» (*like a bird, like a landed fish, like a wolf* և այլն) [7, 3]:

Դարձվածային միավորների իմաստաբանության ուսումնասիրությունը հնարավոր չէ առանձնացնել նրանց քերականական կառուցվածքի վերլուծությունից, քանի որ լեզվական միավորի կառուցվածքային ցանկացած էական հակասություն հանգեցնում է նաև իմաստային էական տարբերությունների:

Դիտարկենք երեք լեզուներում՝ հայերենում, ռուսերենում և անգլերենում կենդանիների անվանումներով անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների կառուցվածքային տիպերը:

Թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում բավականին տարածված է դարձվածքների **ածական + գոյական (եզակի ուղղական)** կառույցը: Նմանատիպ կառույցների գերադաս անդամը գոյականն է, իսկ լրացում բաղադրիչը՝ որակական կամ հարաբերական ածականը: Այս կառույցներն իրենց շարահյուսական գործառությամբ և կարգային նշանակությամբ համարժեք են գոյականին և համարվում են գոյականական դարձվածային միավորներ: Նմանատիպ կառույցների եզրային բաղադրիչն արտահայտվում է ուղղական հոլովով, և դարձվածքի բաղադրիչներն էլ իրար հետ կապված են որոշիչ - որոշյալի հարաբերությամբ, օրինակ. **Անլեզու գառնուկ** - Խոնարհ, հլու, խոսք չդարձնող մարդ: **Գիպուն աղվես** - Խորամանկ մարդ: **Ծեր գայլ** (ռուս. старый волк) - 1. Փորձառու, գործիմաց, 2. Հեշտությամբ չբացվող մարդ: **Հին (Ծեր, Հնօրյա) աղվես** - 1. Խորամանկ, դժվար դրությունից հեշտությամբ ելք գտնող, փորձառու, տարեց մարդ: Իր մարզում մեծ, փորձված վարպետ, մարդ: 2. Խորամանկ, ճարպիկ մարդ: **Սպիտակ ագռավ** - օտար. (ռուս. белый ворон) 1. Բարձր ծագումով մարդ (առավ. կին. հեգն.) 2. Հազվագյուտ բան, երևույթ:

Այս կառույցների բաղիմաստային առանձնահատկությունն այն է, որ դրանք զուտ դարձվածային սերտաճումներ են:

Հայերենում գոյական (եզակի սեռական) + գոյական (եզակի ուղղական) կառույցների գերադաս անդամը՝ ուղղական հոլովով դրվող գոյականը, միշտ հաջորդում է սեռականով լրացմանը: Այս ենթատիպի բաղադրիչները իրար կապված են որոշիչ - որոշյալի և հատկացուցիչ - հատկացյալի շարահյուսական հարաբերությամբ: Նմանատիպ դարձվածքների մի մասը դարձվածային սերտաճումներ են, օրինակ. **Նապաստակի սիրտ** - Վախկոտ մարդ: **Ագռավի ճուր** - Տգեղ մարդ:

Հայերենում լայն տարածում ունեն հետևյալ կառուցատիպի դարձվածքները՝ **հարակալար դերբայ + գոյական և գոյական + ենթակայական դերբայ**: Առաջին կառույցի գերադաս անդամը գոյականն է. դարձվածքում նախ ընդգծվում է անձը, նրա հատկանիշը, օրինակ. **Եփած աղվես** (ա/մ) - Բազմափորձ, վարպետ

մարդ: **Թրջված մուկ /հավ** – Խեղճ ու կրակ մարդ: **Մաշկած աղվես** (բրբ.)–
Չափազանց նիհար:

Կառուցվածքային երկրորդ տիպի գերադաս անդամը ենթակայական դերբայն է, իսկ գոյականը լրացում է. այս դեպքում դարձվածքում ավելի շատ ընդգծվում են մարդու հատկանիշը, ինչով զբաղվելը և այլն, օրինակ. **Արջ խաղացնող /պար ածող** (փխբ.) – Կոպիտ, կոշտ, անշնորհք մարդ: **Էշ ներկող** (խսկց.) – (1-ին իմաստը) Խաբեբա, խարդախ, անարժեք բանին արտաքին փայլ՝ գեղեցկություն տվող՝ խաբող մարդ:

Հայերենում ամենատարածված ածականական իմաստ արտահայտող եռանդամ կառույցը **գոյական + գոյական + հարակադար դերբայ** կառուցվածքային տիպն է: Նմանատիպ կառույցներում հարակատար դերբայը վերջադաս է և կատարում է գերադաս անդամի դեր: Օրինակ. **Էշի ականջում քնած** – (խսկց.) Ապուշ, տխմար, անտեղյակ: **Ուղտի ականջում քնած** (խսկց.) – Անտեղյակ, միամիտ:

Կան նաև **գոյական + գոյական + ենթակայական դերբայ** եռանդամ ածականական իմաստ արտահայտող դարձվածային միավորներ, որտեղ ենթակայական դերբայը վերջադաս է: Գոյականական մյուս բաղադրիչները շարահյուսական տարբեր դերեր ունեն: Օրինակ. **Նապաստակի սիրտ ունեցող** – Երկջուտ, խեղճ:

Առկա է նաև **ածական + գոյական + գոյական** կառույցը, որտեղ եզրային գոյականը գերադաս անդամ է, օրինակ. **Ցամաք ձորի աղվես** – Հյուծված, շատ նիհար:

Հանդիպում են հետևյալ կառուցատիպով ածականական իմաստ արտահայտող քառանդամ դարձվածային միավորներ՝ **գոյական + գոյական + հարակադար դերբայ + գոյական**: Օրինակ. **Գայլի բերանն ընկած գառ** – Անօգնական, անմեղ, փորձանքի մեջ ընկած: Նմանատիպ կառույցներում հարակատար դերբայը ձևավորում է դերբայական դարձված՝ որոշի շարահյուսական պաշտոնով: Գերադաս անդամը դառնում է եզրային գոյականը:

Ռուսերենում հանդիպում են **ածական + գոյական (եզակի ուղղական)** կառուցվածքային տիպով ձևավորված դարձվածքներ, օրինակ. **Заячья дыра** – Վախկոտ մարդ: **Мокрая курица** (разг.) – 1. (հեգն.) Խղճուկ տեսք ունեցող: 2. Վախկոտ մարդ:

Ռուսերենում առկա է **գոյական + ածական** կառուցվածքային տիպով հետևյալ դարձվածային միավորը, օրինակ. **Гусь лопчатый** – Խորամանկ:

Ի տարբերություն հայերենի՝ սրանք շարահասորեն շրջելի են. սրանց գերադաս անդամը գոյականն է [8, 270-272]:

Ռուսերենում հանդիպում են ածական + ածական + գոյական կառուցվածքային տիպով դարձվածային միավորներ, օրինակ. *Знаящая старая птица* - Հմուտ մարդ: Ածական + շաղկապ + գոյական կառուցը հանդիպում է ռուսերենում, օրինակ. *Голодный как волк* - Քաղցած: *Упряма как осел* (неодоб.) - Համառ:

Ռուսերենում կան հետևյալ բազմանդամ բայական դարձվածային միավորներ՝ անորոշ դերբայ + շաղկապ + գոյական + նախդիր + գոյական, օրինակ. *Разбираться как свинья в апельсинах* - Անփորձ լինել:

Անգլերենում նույնպես առկա է (հոդ) ածական + գոյական (եզակի ուղղական) կառուցը, որի բաղադրիչները հանդես են գալիս որոշիչ - որոշյալի և հատկացուցիչ - հատկացյալի հարաբերությամբ: Օրինակ՝ *A jolly dog* (բառացի՝ ուրախ շուն) - Ուրախ, կայտառ, մարդամոտ: *Spartan dog* (բառացի՝ Սպարտայի շուն) - Արյունարբու մարդ:

Անգլերենում հանդիպում են (հոդ)ածական + ածական + գոյական կառուցվածքային տիպով դարձվածային միավորներ, օրինակ. *A knowing old bird* - Հմուտ մարդ:

Անգլերենում առավել հաճախադեպ են ածական + շաղկապ + հոդ + գոյական կամ շաղկապ + ածական + շաղկապ + հոդ + գոյական կառուցվածքային տիպով դարձվածային միավորները, օրինակ. *Angry as a bear* (բառացի՝ արջի պես գայրացած)- Չայրացած; *Angry as a bull* (բառացի՝ ցլի պես գայրացած)- Չայրացած; *As brave as a lion* (բառացի՝ առյուծի պես խիզախ) - Խիզախ, քաջ; *As strong as an ass* (բառացի՝ էշի պես ուժեղ) - Ուժեղ; *As obstinate as a donkey* (բառացի՝ էշի պես համառ) - Համառ; *As large as an elephant* (բառացի՝ փղի պես մեծ) - Մեծ; *A salty dog* (բառացի՝ աղի շուն) - Փորձառու նավաստի; *As quiet as a cat* (բառացի՝ կատվի պես հանգիստ) - Հանգիստ, հանդարտ:

Անգլերենում, հայերենում և ռուսերենում բավականին մեծ թիվ են կազմում անձի հատկանիշ արտահայտող ածականական համեմատությունները: Ածականական համեմատությունները կարող են վերաբերել նաև անձին: Յուրաքանչյուր համեմատություն արտահայտում է գնահատական, որը կարող է լինել դրական կամ բացասական: Եվ դա հիմնականում պայմանավորված է առաջին բաղադրիչի իմաստով: Անձի հատկանիշ արտահայտող ածականական համեմատությունների առաջին բաղադրիչը սովորաբար գործածվում է ուղղակի իմաստով, մինչդեռ երկրորդի իմաստն ավելի ընդգծված է:

Ինչպես նկատում ենք, անգլերենում և ռուսերենում հանդիպում են ածական + գոյական, գոյական + ածական կառուցվածքային տիպով անձի հատ-

կանիշ արտահայտող դարձվածքներ, **շաղկապ + ածական + շաղկապ + հոդ + գոյական** կառույցը հատուկ է միայն անգլերենին, իսկ **հարակապար դերբայ + գոյական + գոյական + գոյական + հարակապար դերբայ + գոյական + գոյական + գոյական + ենթակայական դերբայ** կառույցները՝ հայերենին:

Երեք լեզուներում օգտագործվում են ոչ միայն միևնույն կառուցվածքային տիպին պատկանող, իրար համարժեք, այլև կապական բառերով և նախդիրներով կազմված դարձվածային միավորներ, իսկ մասնակի տարբերությունները պայմանավորված են դրանց տիպաբանական առանձնահատկություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աբեղյան Մ.Խ.** Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2.- Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1974, էջ 398-399:
2. **Մուրվաչյան Ա.Ա.** Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն.- Ե., ՀՍՍՌ ԳԱ, 1959, էջ 16, 22, 27, 47:
3. **Բեդիրյան Պ.Ս.** Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն.- Ե.: «Լոյս», 1973, էջ 103-104, 105-106:
4. **Жуков В.П.** Семантика фразеологических оборотов.- М.: Просвещение, 1978.- 34с:
5. **Шанский Н.М.** Фразеология современного русского языка.- М.: Высшая школа, 1985.- 84с.
6. **Seidl J., Mordie W.** MC English idioms and how to use them.- М.: Vishaya Shkola, 1983.- 233р.
7. **Grenville Kleiser,** Similes and their use.-New York and London, Funk and Wagnalls, 1925, p. 3.
8. **Իշխանյան Ռ.** Արդի հայերենի շարահյուսություն. -Եր., 1986.- էջ 270-272.
9. **Սուքիասյան Ա., Գալստյան Ս.** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան.-Ե.: ԵՊՀ, 1975.-614էջ:

М.Р. БАДАДЯН

СТРУКТУРНЫЕ ТИПЫ ФРАЗЕОЛОГИЗМОВ С НАЗВАНИЯМИ ЖИВОТНЫХ, ХАРАКТЕРИЗУЮЩИЕ КАЧЕСТВА ЧЕЛОВЕКА В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

Сравниваются и анализируются структурные типы фразеологизмов с названиями животных, характеризующие качества человека в армянском, русском и английском языках. Изучение данных фразеологизмов выявляет некоторые сходства и различия между изучаемыми языками.

Ключевые слова: фразеологизм, признак, сравнение, исследование, языковое мышление, сходство, различие.

M.R. BADADYAN

STRUCTURAL TYPES OF PHRASEOLOGICAL UNITS WITH ANIMAL NAMES CHARACTERIZING HUMAN QUALITIES IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

The structural types of phraseological units with animal names characterizing human qualities in Armenian, Russian and English have been compared and analyzed. The study of phraseological units reveals similarities and differences between the units of the three languages.

Keywords: phraseology, feature, comparison, study, linguistics, phraseological unit, similarities, differences.

ՀՏԴ 82-94«19» (479.25) (556)

Մ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

20-րդ դարի հայ հուշագրությունն առատ նյութ է մատակարարում հայ-քրդական բախտորոշ առնչությունները խորությամբ ըմբռնելու համար, ինչը խիստ այժմեական է: Միայն 11-12-րդ դարերից Հայկական բարձրավանդակում հայտնված քրդական սակավաթիվ աշիրեթներն արդեն 20-րդ դարասկզբին կազմում էին Արևմտյան Հայաստանի բնակչության գրեթե կեսը, իսկ 21-րդ դարում՝ բացարձակ մեծամասնությունը:

Առանցքային բաներ. հուշագրություն, հայ-քրդական հարաբերություններ, ազգային լեզու, կրոնափոխություն:

Ներածություն: Բազրատունիների պետականության անկումից հետո (1045թ.) սկսված ծավալուն արտագաղթը, որը սաստկացավ թյուրքական ցեղերի (ապա՝ մոնղոլների)՝ Հայկական բարձրավանդակ ներխուժմամբ (սկսած 1047թ.-ից), ծնունդ տվեց հայկական միջնադարյան գաղթավայրերին, ինչը հայ պատմագիտության ուսումնասիրված խնդիրներից է:

Չընդհատված արտագաղթով պայմանավորված ուժացումից առավել էական է հենց բնօրրանում հայերի քրդացման, մասամբ նաև թրքացման պատճառների և հետևանքների խնդիրը: 11-12-րդ դարերում Հայկական լեռնաշխարհում հայտնված քրդական ոչ մեծաքանակ ցեղերն ընդամենը մի քանի դար անց կազմեցին պատկառելի մեծամասնություն: Հայ ազնվականական շատ տոհմեր, մանավանդ թյուրքական արշավանքներից հետո, իրենց սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակչության հոծ զանգվածներով այդ պատմաշրջա-